

**ՍԵՎՐԻ ՀԵՏԱԳԻԾԸ\***

Մենք չենք կարողանում գտնել մեր շուրջն ընթացող խորքային տեղաշարժերի գիտական ընկալման բանալիները և Հայաստանի ու հայության համար ձևավորել **ապագայապաշտական հայացք** ու քաղաքական ռազմավարություն, որովհետև 21-րդ դարին բնորոշ քաղաքակրթական բարդ հեղաբեկումները շարունակում ենք գնահատել 20-րդ դարի գիտական մտածողությամբ:

Դասական պատմագիտության պատմահամեմատական մեթոդին դիմելու պարագայում մենք այսօր կարող ենք բացահայտել միայն մեր շուրջը տեղի ունեցողի **տիպաբանությունը**<sup>1</sup> Այլ Մակեդոնացու կամ իսաչակիրների օրոք ու նաև Նոր Ժամանակներում արձանագրած օրինաչափության՝ Արևմուտքի առաջխաղացման փաստի կրկնությունը: Կարող ենք անգամ ոգևորվել դրանով՝ վերհիշելով, որ պատմության նման աստեղային պահերին մենք լայնորեն բացվել ենք աշխարհին՝ կերտելով Արտաշիսյան հարստության փառքը, Կիլիկիայի հայոց մշակութային հրաշքը և վերջապես՝ Հայաստանի Հանրապետությունը:

Բայց ինչպիսի՞ տեսք է ընդունելու այս հստակ օրինաչափությունը մեր Ժամանակներում, երբ բնության տարերքների իմաստավորման վրա հիմնված դասական աշխարհաքաղաքականությունը վերածվել է **քաղաքակրթությունների աշխարհաքաղաքականության**, իսկ ազգային շահի ավանդական ընկալումները կերպավորվել են որոշակի ընդհանրությունների հավաքական շահերի տեսքով: Չէ՞ որ նման փոխկապակցված միջավայրերում տարածքների ու ռեսուրսների համար ավանդական մրցակցությունն արդեն իր տեղը զիջում է Երկիր մոլորակի հետագա ճակատագրի կամ **ընդհանուր ապագայի** նպատակային ցուցիչների հստակեցման գործընթացին, ինչը դրսևորվում է տնտեսական, մշակութային, բնապահպանական, իսկ վերջին ամիսներին՝ հակահամաճարակային<sup>1</sup> խնդիրների տեսքով:

Նման պայմաններում քաղաքակրթության բուն նպատակի՝ մարդու մտքին ու կամքին տիրելու գլոբալ մրցավազքից դուրս մնացած մարզինալ խմբերը, երկրները և անգամ տարածքների ու ռեսուրսների համար պայքարող մայրցամաքային տերությունները ստանձնում են սովորական դիտորդների, իսկ լավագույն դեպքում՝ կոնկրետ առաջադրանքներ կատարող սանիտարների գործառույթներ: Մինչդեռ բրիտանական Բրեքսիթին հետևող մայրցամաքային Եվրոպայի աշխարհաքաղաքական հավակնությունների բյուրեղացումն անխուսափելի է դարձնում շատ

\* Ընդունվել է տպագրության 18. 03. 2020:

<sup>1</sup> Ներկա դաժան համաճարկը միայն ու միայն արագացնելու է **ճախքան** կորոնավիրուսի տենդը գրված մեր «խմբագրականում» քննարկվող քաղաքակրթական գործընթացների ծավալումը, որովհետև անկախ նրանից բնութրուն է այսօր ապստամբել մարդկանց դեմ, թե՛ մարդիկ իրենք են կազմակերպել նրա հետ «առերեսումը», այս «արտակարգ պատահարից» հետո մեծանալու է Երկիր մոլորակի վրա ծավալվող գործընթացների **կառավարելիությունը**:

*վելն համահայկական հանդես, ժԲ (ԺԸ) 4րորի, թիվ 1 (69), հունվար-մարտ, 2020*

թե քիչ համասեռ քաղաքակրթական համախմբումների փնտրտուքը նաև Արևելյան Եվրոպայում և Մերձավոր ու Միջին Արևելքում: Բայց այստեղ տարածքների ու ռեսուրսների համար «հին կռվի» գույգ վերապրուկները՝ Ռուսաստանն ու Թուրքիան, շարունակում են առաջնորդվել ավանդական կենսափիլիսոփայությամբ. նրանք երբեմն լրացնում, իսկ երբեմն էլ բացասում են իրար: Տեսակային առումով այս **հակադրամիասնությունը** հոգեհարազատ քաղաքակրթական միջավայրերի ձևավորման հիմնախնդրի բացարձակ հակոտնյան է: Ուստի նման աշխարհաքաղաքական **դինոզավրերի** փոխարեն պրոգրեսը քաղաքակրթորեն ընկալելի կենսունակ **կաթնասունների** կարիք է զգում:

Բայց քանի որ աշխարհաքաղաքական առումով Ռուսաստանը որպես բանալիերկիր Առաջին աշխարհամարտից հետո փականի դեր է խաղացել մեր տարածաշրջանի արդիականացման վերսալ-սևրյան փորձի համար, այսօր նա հրապարակավ պատրաստակամություն է հայտնում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մակարդակով մասնակցելու Մերձավոր ու Միջին Արևելքում նոր աշխարհաքաղաքական համակարգի ձևավորմանը: Նման պայմաններում աշխարհայացքային առումով ավելորդ է դառնում մեր շուրջը տեղի ունեցողի պատմագիտական ու քաղաքագիտական գնահատականների տարբերակումը, որովհետև ներկայումս սկիզբ է առել դրանց բովանդակության միաձուլումը:

Պատճառն ակնհայտ է. պատմագիտությունը վաղուց է բացահայտել ազգերի ինքնորոշման վերաբերյալ 20-րդ դարի երկրորդ տասնամյակի **վիլսոն-լենինյան** պետաքաղաքական լուծումների փաստացի նույնականությունը: Երկուսն էլ փորձել են իրացնել ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը. առաջինը՝ ազգ-պետության, իսկ երկրորդը՝ ֆեդերացիայի գաղափարի կիրարկման միջոցով: Ժամանակին դրանց համարկման **իրական խոչընդոտն** ազատ ու անազատ աշխարհների հակադրությունն էր, որն Արևելյան Եվրոպայի ապագադրությամբ ու մանավանդ ԽՍՀՄ փլուզումից հետո լիովին խարխվել է՝ մեզ վերադարձնելով Առաջին աշխարհամարտի վերջնամասում ձևավորված աշխարհաքաղաքական իրողություններին: Ուստի վիլսոն-լենինյան պետաքաղաքական լուծումների լեգիտիմացման խնդիրը նորից է բախվում իր հին արգելապատնեշներին՝ Լենին-Աթաթուրք<sup>2</sup> գործարքին ու բրիտանա-խորհրդային ռեալպոլիտիկից ծնված Լոզանի պայմանագրին: Արդյունքում մեր տարածաշրջանը թևակոխում է ազգ-պետությունների ձևավորման, սահմանների հստակեցման, այսինքն՝ **ազատության գաղափարի** պետաքաղաքական կերպավորման երկրորդ հանգրվանը:

*Առաջին հանգրվանը սկսվելով Ֆրանսիական մեծ հեղափոխությամբ՝ Եվրոպա մայրցամաքում հիմնականում ակաբուլվել է Առաջին աշխարհամարտի տարիներին՝ որպես **ազգայնության սկզբունքի (principe des nationalités)** հաղթարշավ: Ներկայումս այն թևակոխում է իր երկրորդ հանգրվանը, որում ազգայնության սկզբունքը սկսել է տարածվել նաև Մերձավոր ու Միջին Արևելքում: Մինչդեռ մեր տարածաշրջանում Առաջին աշխարհամարտը*

2 Ավելի մանրամասն տե՛ս «Վեմ»-ի ներկա համարում հրապարակվող **Արարատ Մ. Հակոբյանի** «Մարտի 16, թե՛ 18: Մոսկվայի 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրի ստորագրման ժամկետների շուրջ» հոդվածում:

**Սևրի պայմանագրով** է ամրագրել ազգայնության սկզբունքը, որը կոնկրետացնում էր Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը՝ «Ժողովուրդների իրավունքները պատկանում են իրենց՝ ժողովուրդներին» բանաձևի միջոցով<sup>3</sup> : Իսկ դրա կիրարկումը մասնակիորեն կասեցրած լոզանյան գործարքն անհրաժեշտ էր այնքան ժանանակ, քանի դեռ պահպանվում էր ազատ ու անազատ աշխարհների միջև հաստատված ուժային հաշվեկշիռը, ինչը ԽՍՀՄ փրկումսից հետո այլևս գոյություն չունի:

Ուստի ազատության գաղափարի ճանապարհը փակող խորհրդային պատնեշի փլուզումից հետո ազգայնության սկզբունքի հիման վրա Մերձավոր ու Միջին Արևելքի նոր կոտորակման անհրաժեշտությունը ինքնաբերաբար վերածվել է Սևրի ու Լոզանի կարգավիճակների փոխատեղման հրամայականի: Քանզի համաշխարհային քաղաքականության բենահարթակը կրկին գրավել է ազգ-պետությունների ձևավորման հիմնախնդրի միջազգային իրավական լեգիտիմությունը հիմնավորած այն միջազգայնական հոսանքը, որն իր առաջնորդների՝ **գարիբադիների** ու **մաձձիհների** միջոցով դեռ 19-րդ դարի կեսերից էր ազգայնության գաղափարը փոխանցել մեր **նալբանդաներին** ու **րաֆֆիներին**: Դրա միջոցով էինք մենք վերականգնել համաշխարհային պատմության մեջ մեր ներկայությունը և դարձել իր ազատության համար պայքարող քաղաքակիրթ աշխարհի մի մասնիկը: Ու մինչև Առաջին աշխարհամարտը ազգայնության սկզբունքի հաղթարշավն ազատություն էր պարզևեղ Հունաստանին, Իտալիային, Բալկանյան թերակղզու երկրներին, ազատ աշխարհին սահման դրած Ռուսաստանի ու Թուրքիայի հեղափոխական բռնապետությունները 20-րդ դարի երկրորդ տասնամյակում ժանանակավոր ռևանշի հասան նրա հանդեպ: Այդ պատճառով ազատ աշխարհի վերադարձը մեր տարածաշրջան Լոզանով չփակված, այլ սուկ հետաձգված Սևրի տեսականի վերածնունդն է որպես աշխարհաքաղաքական տեղաշարժերի հետագիծ՝ **Սևրի հետագիծ**:

Սևրի պայմանագրի վերաբացման նոր խթանը Միջերկրականից մինչև Կասպիականը ձգվող տարածաշրջանի ձևավորման միջոցով համաշխարհային քաղաքակրթության մեջ Մերձավոր ու Միջին Արևելքի ինտեգրման ծրագիրն է: Նրանում տեղ գրավելու համար անգամ Ռուսաստանն է փորձում վերադառնալ մինչև Առաջին աշխարհամարտի ավարտը իր համար հոգեհարազատ քաղաքակրթական միջավայրը, որին ինքը դավանանել է 1917 թվականին՝ բոլշևիկյան հեղաշրջումով փրկության շանս տալով Թուրքիային: Արևմուտքին վնասելու համար Հայաստանին կրկին զոհաբերելու հնարավորություն նա այլևս չունի, որովհետև կհայտնվի Թուրքիայի անհամաչափ առաջխաղացման փաստի առջև, այսինքն՝ Թուրքիան ինքը կտեղավորվի Մերձավոր ու Միջին Արևելքի ինտեգրման ծրագրում:

Գիտակցելով, որ իրենցից մեկն անպայման զոհաբերվելու է համաշխարհային նոր կարգին, շտապում է նաև Թուրքիան՝ փորձելով նախքան Լոզանի՝ Սևրի փոխարկվելը հետ բերել անգլիացիների մեղքով Լոզանում իր **չստացածը**՝ Հյուսիսային Իրաքն ու Հյուսիսային Սիրիան, որից հետո նա հավակնություններ է ցուցաբերելու նաև Լենին-Աթաթուրք գործարքով Հարավային Կովկասում իր **չստացա-**

3 Ավելի մանրամասն տե՛ս Միքայել Վարանդյանի ծննդյան 150-ամյակի առթիվ «Վե՛մ»-ի ներկա համարում հրատարակվող **Սեյրան Ա. Զաքարյանի** «Ազգայնության և միջազգայնության մեծ տեսաբանը» ուսումնասիրության մեջ:

**ծի՝** Բաթումի ու Չանգեզուրի հանդեպ: Եվ այդ ժամանակ համաշխարհային քաղաքականության ջունգլիներում դեմ դիմաց հայտնված աշխարհաքաղաքական դինոզավրերը բախվելու են իրար: Գիտակցելով իրենց պարտադրվող գաղղիատորների դերակատարությունից բխող վտանգները՝ «սուլթանն» ու «ցարն» այսօր միմյանց դեմ պատերազմելու ցանկություն չունեն, բայց հեռանկարի առումով դրանից խուսափելու հնարավորություն նույնպես չունեն: Որովհետև երկուսի արխայիկայսերական տեսականները դարձել են տարածքների ու ռեսուրսների համար պայքարի սակրալիզացիայի պատանդները: Մինչդեռ նրանց դիմակայության **կառավարման վահանակը** վաղուց արդեն գորբալ քաղաքականության ճարտարապետների ձեռքերում է, որոնք հարկ եղած դեպքում կարող են ձևավորել նաև ուժերի համապատասխան հարաբերակցություններ:

Ուստի **դինոզավրերի պատերազմում** ոտքի տակ չընկնելու համար տարածաշրջանի երկրները՝ Հայաստանը, Հունաստանը, Կիպրոսը, Բուլղարիան, Սիրիան, Իրաքն ու Վրաստանը պետք է մշակեն Թուրքիային զսպող իրենց ընդհանուր պաշտպանական քաղաքականությունը, որը կարող է անվտանգության բարձիկի դեր խաղալ՝ գերուժերի շահերի բախման կրիտիկական պահերին: Պատճառն այն է, որ աշխարհաքաղաքական տեղաշարժերի **առաջին հանգրվանում** առավելագույնը լուծվելու է Սիրիայում, Իրաքում, Հարավային Կովկասում և այլ տարածաշրջաններում Թուրքիայի հավակնությունների զսպման հարցը: Իսկ **երկրորդ հանգրվանում** անխուսափելի դարձող Ռուսաստանի ներքին կերպավորումը և Թուրքիայի հետագա մարզինալացումը նախ փյուզելու և ապա ամբողջացնելու է տարածաշրջանի նոր ճարտարապետությունը, որը բաղկացած է լինելու ռուս-թուրքական «մուրճի ու սալի» կապանքներից ազատված ազգ-պետությունների խճանկարից:

Համաշխարհային քաղաքականության դիմաշրջումը Լոզանից ու վերադարձը Սևրի քաղաքակրթական հետագծին մեզ՝ հայերիս համար նաև ներքին մարտահրավեր է: Թվում է, թե մենք կրկին ստանում ենք այն պատմական հնարավորությունը, որը չենք կարողացել իրացնել 20-րդ դարի սկզբներին: Բայց չպետք է մոռանալ, որ հայությունն իր թանկագին արյան մեծ արտահոսքի ու գորբալ սփռման հետևանքով կորցրել է իր ժողովրդագրական ներուժի զգալի մասը, իսկ տարածաշրջանում բնակվող ժողովուրդներից շատերը բազմապատկել են իրենց թվաքանակը: Ուստի ներկայումս պահանջատիրության հարցը մեզ համար հողահավաքից առավել **մեծ ազգահավաքի** իմաստ ու նշանակություն է ստացել: Այսպես Սևրի մեծ սեղանին բազմելու համար Հայաստանի Հանրապետությունն այսօր պետք է ունենա ձուլման և ուժացման թմբիկից դուրս եկած ու դեպի Երկիր վերադարձի նպատակադրումով առաջնորդվող սփյուռքահայ համայնքների հզոր աջակցությունը: Մինչդեռ ներկայումս անգամ դրանցից խոշորագույնները՝ իր քրեածին շրջապատում տարուբերվող **ռուսաստանյանը** և 2018 թ. թավշյա իրադարձություններից ծնված վարդագույն հույսերի մեջ օրորվող **ամերիկյանը**, կրկին համազգային օրակարգին վերադառնալու խնդիր ունեն: Իսկ ահա Հայաստանում մեծացած նոր սերնդին գորբալացման պայմաններում ազգային դաստիարակություն տալու սիգնիֆյան աշխա-

տանքները կարող են արդյունավորվել միայն կոնկրետ բովանդակությամբ լցվելու՝ հայացքով դեպի Հայկական հարցը շրջվելու պարագայում:

**Հայկական հարցը եղել և մնում է հայ ազգայնության շարժիչ ու նրա գոյության իմաստը՝ մեր ազգային գերնպատակը:** Նման անժամանցելի տեսլականը անցյալից տեղափոխվելով ապագա՝ մեր ներսում հաղթահարելու է արտաքին կողմնորոշումների բախման հետևանքով հայության տարբեր հատվածների միջև խորացող արժեքային տարանջատումների վիճակը, ինչը ազգը մասերի բաժանող **հատվածականության** նոր դրսևորում է: Ուստի՝ մեզ **քաղաքականապես բուժելու** ու կրկին միավորելու իրական ներուժ ունեցող միակ հզոր ազդակը Հայկական հարցի վերաբացման անխուսափելիության գիտակցումն է:

Ներկա՝ 2020 թվականին հանդիսավորապես նշելով մեր ազգային պահանջատիրության հիմքը կազմող գույգ փաստաթղթերի՝ Սևրի դաշնագրի ու Հայաստան-Թուրքիա միջպետական սահմանի մասին ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճռի մեկդարյա հորելյանները՝ մենք արձանագրում ենք դրանց **անցյալացման փորձերի** կատարյալ ձախողման փաստը:

Ավելին՝ Սևրի հետագիծն այնքան պարզորոշ է ուրվագծվում Մերձավոր ու Միջին Արևելքի արդիականացման ու միասնականացման գորբալ ռազմավարությունների հետնախորքում, որ մեր առաջնահերթ խնդիրը ոչ թե օր առաջ Հայկական հարցը միջազգային դիվանագիտության օրակարգ վերադարձնելն է, այլ նրա անխուսափելի վերաբացմանը պատրաստ լինելը:

Իսկ մինչ այդ Միջերկրականից մինչև Կասպիականը բացվող մեր նոր տարածաշրջանում, որը համապատասխանում է Տիգրան Մեծի ձեռամբ գծված հայոց քաղաքակրթական տարածքին, կրկին առանցքային դերակատարություն ստանձնելու համար պարտավոր ենք վերականգնել մեր համադրական գործառույթները: Հայաստանը, հայկական Սփյուռքը, հայկական կապիտալը և հայկական մշակույթը որպես արևմտյան ու արևելյան արժեքների համադրության լավագույն բնորդներ, մերձավոր-միջինարևելյան տարամիտված միջավայրերի **քաղաքակրթական կոնվերգենցիայի** ապահովման միջոցով կարող են վերստանձնել տարածաշրջանի տնտեսամշակութային առաջադիմության շարժիչների դերակատարությունը՝ Հայկական հարցի լուծումը դարձնելով նման առաքելության իրականացման **պայմանը**:

## THE TRAJECTORY OF SÈVRES

## ТРАЕКТОРИЯ СЕВРА

Իմք.

Edit.

Ред.